ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 24

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ 05.08.2019ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝

Որոշեց

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնքի ավագանու կողմից ուղերձ ընդունելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈՒԼԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍՈՖԻԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքների միավորման գործընթացը այլ համայնքների հետ, Արարատի մարզի Մրգանուշ համայնքի միավորման նպատակահարմարության հարցը,արտահայտելով համայնքի բնակչության դիրքորոշումը ,ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 13-հոդվածի 11-մասի պահանջներով՝

Որոշեց

1.Ընդունել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնքի բնակչությանը ուղղված ուղերձ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2.Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանը ուղղված ուղերձ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՑՈԼԱԿ

ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍՈՖԻԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված N1

Մրգանուշ համայնքի ավագանու
«05»օգոստոսի 2019թ. թվականի
N 25-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

ՈՒՂԵՐՁ

Մրգանուշ համայնքի հարգելի բնակիչներ,

Մրգանուշ համայնքի ավագանին քննարկելով համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով Մրգանուշ համայնքի բնակչության շրջանում տիրող գերակա տրամադրությունը այլ համայնքների հետ Մրգանուշ համայնքի միավորման գործընթացի նկատմամբ,

Հաշվի առնելով, որ այլ համայնքների հետ միավորումը չի տալիս ֆինանսական լրացուցիչ հնարավորություններ կամ նոր լիազորություններ,

Ավելի արդյունավետ համարելով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված միջհամայնքային համագործակցության հնարավորությունները,

Մրգանուշ համայնքի ավագանին արտահայտելով իր կանխորոշիչ դիրքորոշումը, հայտարարում է, որ նպատակահարմար չի համարում համայնքի միավորումը որևէ այլ համայնքի հետ:

Որպես Մրգանուշ համայնքի ներկայացուցչական մարմին, համայնքի ավագանին, վստահեցնում է, որ կիսելով համայնքների միավորման գործընթացի նկատմամբ ձեր կարծիքն ու դիրքորոշումը, ղեկավարվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասություններով:

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը կլսի համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը՝ գործընթացը շարունակելու դեպքում պարտադիր անցկացնելով տեղական հանրաքվե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

Հավելված N 2

Մրգանուշ համայնքի ավագանու
«05»օգոստոսի 2019 թվականի
N 25-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՈՒՂԵՐՁ

Արարատի մարզի Մրգանուշ համայնքի ավագանին, որպես ներկայացուցչական մարմին, քննության առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնված համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով այդ գործընթացի նկատմամբ համայնքի բնակչության ունեցած բացասական կարծիքը, նպատակահարմար չի գտնում Արարատի մարզի Մրգանուշ համայնքի միավորումն այլ համայնքի կամ համայնքների հետ:

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը կլսի համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը՝ գործընթացը շարունակելու դեպքում պարտադիր անցկացնելով տեղական հանրաքվե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ_____Մ.ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

Հիմնավորում

Համայնքների միավորման գործընթացում Մրգանուշ համայնքի ավագանու դիրքորոշումն արտահայտող համայնքի բնակչությանն ու ՀՀ կառավարությանն ուղված ուղերձների ընդունումը բխում է համայնքի ավագանու կարգավիճակից, համայնքների միավորմանը Մրգանուշ համայնքի ավագանու դիրքորոշումն արտահայտելու անհրաժեշտությունից՝ ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով:

ՏԵՂԵԿԱՆՔ

Համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների վրա ազդեցության մասին

Սույն որոշման նախագիծը համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների փոփոխություն չի առաջացնում: